

Գրիգոր Երէց պէտք է նկատուի ծաղկող մանրանկարիչը Ս. Վարդանի հովանոյն տակ գրուող ձեռագրաց:

Դարձեալ ուրիշ ձեռագիր մը, «Սաղմոսարան և Նարեկի մի մաս ժիթ», Լիմ Սնապատ. Հին թիւ 331. ՌՃԼԷ=1688: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշեպատ: Հանգամանք՝ լաւ պահուած: Մագ. Պահպ. չունի: Գատարկ թուղթ՝ չունի: Մեծութիւն՝ 10 × 14: Գրութիւն՝ միասին և երկսին: Թուղթը՝ 372: Տողը՝ 19 և 21: Գիր՝ բոլորգիր: Սկզբնատառը՝ գունաւոր ծաղկներ: Լուսանցազարդը՝ չունի: Մանրանկարը՝ Նարեկացու մի ոսկեգօծ պատկեր: Կիսախորանը 9: Գրիչ խալիֆա: Ստացող՝ Սեփիա կրօնաւոր: Ծաղկող՝ Գրիգոր երէց Վանեցի: Կազմող՝ անյայտ: Ժամանակ՝ ՌՃԼԷ=1688: Տեղի՝ Վան: Յիշատակարան չունի¹:

Ըստ իս վերի ցուցակագրեալ նոյն այս ձեռագիրն է որ այժմ իմ հաւաքածոյիս մաս կը կազմէ: Թէեւ ցուցակագրութեան համաձայն յիշատակարան պէտք չէ ըլլայ, սակայն հետաքրքրական է իմանալ թէ ուր կէ՞ արգեօք ցուցակագիրը ստացած է ձեռագրիս գրչին, ստացողին, ծաղկողին, ժամանակին և տեղւոյն մասին այդ իր տուած տեղեկութիւնները: Ուրեմն անտարակոյս ձեռագիրը ունէր յիշատակարաններ, որոնք ցուցակին հրատարակութեան պակսեր են որեւէ պատճառաւ: Թէեւ նկարներուն՝ որոնք ոչ միայն մէկ այլ երկու հատ են, լուսանցազարդերու, որոնցմէ բազմաթիւ կան, և ուրիշ մանրամասնութեանց մասին ցուցակագիրը բոլորովին կը տարբերի ձեռագրէն, սակայն ատիկա ցուցակագրին աճապարանքին, ցուցակագրուած նիւթերուն խառնումին և ուրիշ պարագաններու կը վերագրեմ, և հուսկ կը նոյնացընեմ իմ ձեռագրիս վերոյիշեալ ցուցակագրութեան ձեռագրին հետ: Այս նոյնացումը ապացուցանելու ուրիշ փաստ մըն ալ սա է որ՝ վերոյիշեալ ձեռագրիս կոնակը փակցուած է ճերմակ թղթեայ պիտակ մը մասամբ պատուած ուր կ'երեւի սկզբնական թիւ 3 մը, յետոյ պատուած պիտա-

կին պատճառաւ երկրորդ երեքի մը ստորին պոչը, և հուսկ որոշ թիւ մէկ մը, այսպէս տալով թիւ 331, որ ցուցակագրին Լիմ անապատ հին 331ին կը համապատասխանէ. թող որ ձեռագրիս Լիմ անապատին պատկանելու յիշատակարանի ալ հանդիպեցանք ձեռագրիս յիշատակարաններուն կարգին:

Հարկ է ըսեմ թէ արուեստի տեսակէտով Գրիգոր Երէցի մանրանկարներն ու ծաղկունները իրապէս նոր ձեւ մը չեն, սակայն անոնք կու գան ցոյց տալ որ Վանի մէջ դեռ բազմաշխատ մանրանկարներ պատրաստելու ճաշակն ու արուեստը կար: Հայ ուսումնասիրութեանց ծանօթ են Վանեան ինչ ինչ ծաղկողական և մանրանկարչական դարոցներ, որոնց մասին վերջնական ուսումնասիրութիւններ սակայն դեռ պատրաստուած չըլլալով՝ դժուար է ինծի հոս ամփոփում մը տալ: Սա յայտնի է որ գոնէ Ժի դարուն թէ՛ ծաղկումը և թէ՛ մանրանկարչութիւնը ազդուած են ուրիշ արուեստներէ: Գրիգոր Երէց կը սիրէ ոսկուած, գունաւորուած և այսպէս ծանրաբերնուած արուեստը: Ժի դարուն Պոլսէն սկսեալ մինչեւ Երուսաղէմ, և Կովկաս ու Պարսկաստան հայ մանրանկարչութիւնը և ծաղկումը իր արհեստին մէջ շատ կը նմանի կիտուածման արուեստածելին, գոյները որոշ իրարու մօտ շարուած, մաքուր բաժանումներով, ոսկին՝ ճոխութեան նշանը՝ տարապայման կերպով տիրապետող: Հոն կը պակսի արուեստի թեթեւութիւն, փոխանակ ատոր՝ կայ գծերու կազմութեան, գոյներու դասաւորման և տեղաւորման, ոսկելու ճշող ծանրութիւնը որ դժբախտաբար կը խլէ շնորհը թէ մանրանկարներէն և թէ ծաղկուններէն: Ծաղիկները հաստ են և կարծր, շարժումները թէեւ բնական՝ սակայն սառած, ահա այս է մեր Ժի դարու տիրապետող արուեստը: Գրիգոր երէցէ առաջ ձեռագրիս ծաղկող անծանօթ արուեստագէտը կը տարբերի Գրիգոր երէցէն, ըլլա-

1. Աճ 50.

լով աւելի թեթեւ իր գծերուն և գոյներուն մէջ, թէեւ ան ալ գոյներու ճաշակին մէջ տկար է, ասկէ զատ լուսանցազարդերը որ իր են՝ ոչ մէկ նորութիւն ունին:

Եւ Սակայն Գրիգոր երէց հասարակ մանրանկարիչ մը և ծաղկող մը նկատուելու չէ, այլ մէկը որ երկար ժամանակ սորված է իր արուեստը և ժամանակին ճաշակը իւրացուցած մասնաւոր կերպով անոր հետամուտ ըլլալով: Իր երկու մանրանկարները՝ որոնց արտատպութիւն տրւին հոս՝ մանաւանդ թիւ 1ը՝ արտայայտիչ են: Ունոնք ապրող, շնչող իսկական տիպեր են: Եւ եթէ նոյն իսկ հաստատուի որ անոնք իր յղացումները չեն, սակայն այդ կերպաւորումներուն իր կողմէ զատուած և գործածուած ըլլալն անգամ

զրաւական մըն է իր արուեստական հմտութեան: Որովհետեւ վերջապէս ինչ որ ալ ըլլայ Գրիգոր Երէց մեզի կը կտակէ արուեստի ձեւ մը որ օղակ մըն է մեր արուեստի պատմութեան շղթային համար:

Իսկ Գրիգոր երէցի յիշատակարանը ցոյց կու տայ որ միայն մագաղաթեայ կրկնագիրներ չկան, այլ կան նաեւ մանրանկարչական «կրկնագիրներ»: Ծանօթ էին վերակերտական փորձեր զանազան հին ձեռագիրներու ծաղկուններուն վրայ, սակայն հազիւ երեք տարի առաջ ծաղկուած ձեռագիր մը դարձեալ ծաղկելու մանրանկարելու այս փորձը՝ հաւանականութիւն մը, ծանօթութիւն մը եւս կ'աւելցնէ մեր մանրանկարչական մութ պատմութեան համար:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ԼԵԶՈՒԱԿԱՆ

Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Հ Ա Ր Ց Ե Ր

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՄ

Ի լոյս ընծայելով վերջին մասնագիտական երկարաշունչ աշխատութիւնս՝ Ողորդարար և առողսնորիս հայերեւի, փափաքեցայ և կարծեցի լաւագոյն բաներն ըսել մեր լեզուի կարեւորագոյն և անլոյժ կամ անծանօթ մնացած խնդրոց մասին: Առանձինն ու հայ մամուլին մէջ բանիմաց անձանց կողմանէ յայտնուած տեսութիւնք համոզեցին զիս՝ թէ նպատակիս հասած էի: Ճշմարիտ բանասիրին հաճելի է անշուշտ՝ գնահատութեանց հետ լսել իւր գործին թերութիւնքն ալ, որոյ մէջ իսկ է յառաջագիմութիւնը: Սակայն ես զըժբախտութիւնն ունիմ հանդիպելու յաճախ այնպիսի դատաւորաց, որոց հանդէպ կը ստիպուիմ փոխել դերս, և ես ինքնին դատաւոր կանգնիլ իրենց: Անոնց միոյն՝ որ երեւեցաւ Յռաւարի մէջ (1934, նոյ. 10, 17), արժանաւորագոյն պատասխանն համարեցայ լռութիւնը, որ ոմանց դէմ աւելի պերճախօս է քան զրիչը: Երկրոր-

դին՝ Սիւնի մէջ (1935, 220), որ աշխատութիւնս ի հիմանց տապալելու ելած էր, յետ ուշի ուշով կարգալու պատասխանեցի՝ թէ «կօշկակարը թող կօշկէն վեր չեկնէ» (ՔՐՄ. 1935, 229). համոզուեցաւ ու գնաց նստաւ կօշկին բով: Երրորդ դատաւոր մ'ունեցայ յանձին Խ. Քարտաշի, դարձեալ Սիւնի մէջ (1936, 220), բայց աւելի մեծանձն, — զայս կ'ըսեմ ի սէր արդարութեան, — որ գնահատելով գործս, շատացաւ սրբագրել անոր քանի մը տկար կամ սխալ կարծած կետերը: Ձիւս ընդ երկար կաշկանդող աշխատութիւնէ մ'ազատուած, կու գամ այժմ պատասխանել իրեն և ուրիշներու:

Քարտաշ կը դիտէր՝ թէ «արժեքաւոր մասերուն բով ունիմ խորշիլի պնդումներ ալ, որոնք եթէ հասկնալի են ձեռնհասներուն, սակայն անմատչելի կամ զէթ խրտչելի են ժողովրդին, մանաւանդ աշակերտին»: Ընթերցողաց այս զանազա-

նութիւնը պարոնին կողմանէ, որ շատ ուղիղ է, կը փութացնէ զիս պատասխանելու՝ թէ իմ շօշափած լեզուական նուրբ խնդիրները, կամ պարզերն իրենց նորազոյն աստիճանին վրայ, ուսումնասիրած եմ բուն իսկ «ձեռնհասներուն» համար, ոչ թէ չհասկցող կամ խրտչող ժողովրդը հեան և աշակերտին։ Աշխարհիս վրայ ամէն բան ամենուն համար է։ Ճշմարտութիւն մը՝ զոր ներելի չէ չգիտնալ։ Եւ եթէ ձեռնհաս դասն ունի զարգացում մը, ուստի զուրկ են ստորադաս կարգերը, ինչո՞ւ չունենայ նա և այդ զարգացման համեմատ մտաւոր մեծութիւն, և ինչո՞ւ ամէն ինչ ժողովրդեան և աշակերտին խոնարհ մակարդակին վրայ պիտի կենայ։ Այս է արդեօք բոլոր քաղաքակիրթ ազգերու յառաջդիմութեան եղանակը։ Բայց գանգ այդ անմատչելի կամ խրտչելի հարցերուն։

1. Հաստատուած մեր և և է գրեթէ յունական ծագման, գոյութեան պատճառին և նոյն իսկ արդի առողջամտութեան վրայ, պահանջեր եմ՝ որ յարգենք նախնեաց օրէնքը, առաջինը նկատելով փակ զիր, և գործածելի բոլոր ներքին վանկերու մէջ։ Իսկ երկրորդը՝ բաց, և բառին ծայրը կամ վերջին վանկի մէջ միայն։ Այդ զանազանութեան բնախօսական պատճառն ալ տուած եմ, թէ «երբ բերանը խօսելու պահուն բառի վանկերն արագութեամբ կը շարէ, ժամանակ չէ կարող ունենալ բառի ներսը բացուելու և հնչելու և ձայնը։ այլ ստիպուած է փակ են արտասանել։ Իսկ վերջին վանկի մէջ հանդիպելով անոր, շեշտի պահանջմամբ կանգ կ'առնու անոր վրայ, և կարող է փակել կամ բանալ ըստ հաճոյս, և հնչել զերկամ գեր, երեկ կամ երեկ» (253)։ Ըսած եմ եւս՝ թէ բառին ծայրը միշտ բաց է։ և թէ «բերե և յատենե բառից մէջ ո՞վ չի զգար զի աւելի բաց քան և» (80)։ Եւ թէ հետեւաբար հարկ է գրել հայերէն՝ հայերէնի՝ հայերէնով, ամէն՝ ամենուն՝ ամէնէն։

Այս իրական ու դրական պատճառաբանութեան ինչ պատասխան կ'ուզէք որ

տայ Գարտաշ։ կը պահանջէ որ նկատեմ՝ թէ «արդի շեշտով ու հնչումով՝ բառամէջի և և է իրարմէ տարբեր չեն»։ Տարօրինակ բան։ Իմ դէմ կը ճակատեցնէ իմ տեսութիւնս իսկ։ Եւս եմ որ կը պնդեմ՝ թէ էն իւր կախ պոչով բառին ներսն անցնելով, իւր հնչումն ալ հետը չի տանիր։ այլ կ'երթայ կ'առնու և ինչ ձայնը։ Խառնազգան մը կը դառնայ։ և հօն երկու գիր մի և նոյն ձայնը ներկայացնելու հակասութեան մէջ կը գտնուին։ Եւ անով որ էն տարբեր ձայն մը կու տայ հօն քան իւր բնիկը, իւր ներկայութիւնը սխալ և անտեղի է։ Եւ այս ոչ միայն «արդի շեշտով ու հնչումով», այլ նա և ս. Մեսրոպայ նախնեաց, ժամանակակից ու հետեւորդ շեշտով ու հնչմամբ։ որոյ համար նախնիք ներքին վանկերու մէջ միշտ և գրեցին՝ թէ բաղաձայնից և թէ ձայնաւորաց առջեւ, ինչպէս ցուցած եմ փաստելով։ և վերջին վանկի էն ալ և կամ ի գրին փոխեցին, երբ ներքին վանկ եղաւ։ Ողջմտութիւնն ինչպէս նախնեաց, կ'աղաղակէ հօղ և մեզ՝ թէ մէկ ձայնին մէկ գիր բաւական է, և զէ թողէք վերջին վանկի մէջ ու ծայրը։

Այս ստիպողական պահանջման դէմ որչափ անսովոր է Գարտաշի դատողութիւնը, որ այդ զանազանութիւնը կը սահմանէ «խրտեցուցիչ կաշկանդում մը»։ Բայց ո՞ւր տեսնուած է՝ Հայաստանէն զատ, որուն արեւմտեան հայութիւնը չուզեց հետեւիլ՝ նախնեաց և հին ու նոր առողջամտութեան պահանջածը խրտեցուցիչ կաշկանդում համարիլ։ Իւ մի՞ թէ «հայերէնը սովորիլ կամ գործածելու ուղղոններուն» իսկ աւելի դիւրին և հաճելի չէ՞ միշտ և գրել տալ ներքին վանկերու մէջ, քան նոյն ձայնի տակ գրելը զանազանելու տագնապին ենթարկել, յորում է իսկական խրտումը։

Բայց պարոնին այդ սխալ պատճառաբանութիւնն յառաջ կու գայ ուրիշ սխալէ մը։ Ինք կը զգացնէ՝ թէ կը պատկանի այն արեւմտահայ ականջակորոյս մեծ խմբին, որ ներքին է էն զատելու անկարող է բա-

ռավերջի էն անգամ։ «Ընդհանուր (և տրամաբանական ալ) կանոնն է, կ'ըսէ, թէ յոգնակիի և հոլովման ձեւերուն մէջ տառերը չեն փոխուիր՝ եթէ հնչումը չի փոխուիր»։ Հօս է իւր տկար կէտը, իւր ծանր սխալը։ կը կրկնեմ։ վերջին վանկի կամ արտաքին էն ներս անցնելով՝ կը փոխէ հնչումը։ Պարոնն զգայ կամ ոչ, հաւաստապէս կը փոխէ՝ առանց իրեն հարցնելու, և իւր բերանին մէջ իսկ։ Փոփոխութիւնը կը կատարուի, ես կը լսեմ, ինք չի լսեր։ և չլսելով իրաւունք չի ստանար հերքելու զայն։ Խօսւ մ'ու ալ կանջանի մը կը գտնուին ձայնափոխ գործընթացներ։ առաջինը կը վկայէ՝ թէ գործիչն ձայն չի գար։ երկրորդը՝ թէ կու գայ։ Որո՞նք պէտք է իրաւունք տալ։ կամ լսողն իբրեւ չլսող վարուելու է լսածին հանդէպ, որպէս զի արդար կարծուի իսկին։

Պարոնը կը զգացնէ եւս՝ թէ բաւական ուշադրութեամբ չէ հետեւեր իմ ուսումնասիրութեան և անոր մէջ պարզուած հաստատուն օրինաց, երբ կ'ըսէ՝ թէ իմ «պնդած կանոնը ընդհանրացնելով, պիտի գրենք օրենք, շենք, անեծք»։ Ո՛չ, բարեկամ։ վերեւ շեշտեցի՝ թէ վերջին վանկին վրայ ձայնը կանգ առնելով, կարող է բանալ կամ՝ փակել անոր ձայնաւորը։ ուստի ըստ հնչարանական օրինաց են օրենք, շենք, անեծք։ և հօղ է միայն՝ որ նախնեաց հնագոյն և հարազատ ուղղութեան մէջ և և է խառն կը գործածուին։ Պէտք է գիտնաք զատել վերջինն ոչ վերջիններէն։ Շեշտած եմ եւս՝ որ վերջին վանկի զոյգ բաղաձայնից առջեւ ստիպողական է և, երբ բառն արմատական է (19)։ մինչ ձեւ օրինակաց մէջ քաժանց է, և կան ատոնց եզական ձեւերն ալ։

Եւ դեռ հետի չեն այն օրերն՝ երբ ծանր վէճ մը ծագեցաւ լեզու բառին շուրջ՝ երկու բանասիրաց միջեւ, մին մեկնելով ու գրելով զայն չեւ-զոք, և միւսը՝ չեւ-զոք։ ինչպէս ալ մեկնուի այդ, հայ ուղղագրութեան պահանջմամբ իսկ գրուելու է եով։ Միով բանիւ՝ ներսը գրուած ամէն է արդիւնք է՝ առաջին գրողաց քով անգիտակ-

ցութեան, և յետոց՝ աւանդական հետեւողութեան։ Իսկ ամենուն ազբիւր՝ զանազանող ականջի բացակայութիւնն է։ Անգործ և ստրուկ մտքերու յատուկ է՝ «ընդունուած և հետեւողական» ծուռ սովորութեանց փարումը, ոչ անոնց՝ որ գիտութեան ու գիտակցութեան լայն ոլորտներու մէջ կը սաւառնին։ Սովորութիւնը ժամանակաւ կը զրէր նա և կալված, զրվիլ, երբեք, զոր գիտութիւնն յետոյ սրբագրեց։ զի սովորութիւնը գոյութեան անշարժ իրաւունք չի տար բնաւ սխալներուն։ Աշխարհիս վրայ յաւիտենական բան չկայ։ մանաւանդ ծուռը։

2. Ես նախնեաց հետ կը գրեմ բառին ներսը նա և «բանավիճեր», ինչպէս կ'ըսեմ վիճել, վիճաբանութիւն։ և զոր ուրիշ մը կրնայ գրել «բանավեճեր»։ հօղ ճաշակի խնդիր է։ Բայց ոչ ոք իրաւունք ունի գրելու «բանավեճեր», որ հնչարանական և ուղղագրական սխալ մ'է՝ ըսինք։

3. Ես «խտղտելը» մեկնած եմ իբր խտղտ կրկնակ, և ղը (փի. խի) արդիւնք նախորդ տի դրացութեան։ Գարտաշ սխալ կը համարի մեկնութիւնս, և ղը կը հանէ խտիղ ձեւէն։ Շատ դիւրին դատաստան մը, յորում անտեսուած է՝ թէ իդ վերջը հայ բառերու մէջ նա և ածանց մասնիկ է, ինչպէս պրս. տալ (կացին, ուրագ) բառէն կազմուել է տաշ-ել և տաշ-իդ։ տարմ կամ տորմ արմատէն՝ տորմ-իդ, ուստի և նաւաւորմ։ Արդէն խտղտելին երկրորդ տն ալ հաւանական կը ցուցնէ խտ-ղտ կազմը, քան թէ տը սաստկացուցիչ եկամուտ տառ մը համարիլ։ Մեր այս բայն ոսկեղարու մէջ կը նշանակէ շլացնել և ի ցանկութիւն զրգուել։ Առաջին իմաստին մէջ կայ խիտ արմատը կամ լուսոյ սաստկութեան գաղափարը։ երկրորդին մէջ՝ խիք (ցաւ), որով ոսկեղարուն նա և «ցաւ ցանկութեան»։ վերջապէս պարոնին կարծածին չափ դիւրին չէ խտ-ղտին մէջ խտիղ տեսնել, և իմ մեկնութիւնս սխալ հռչակել։

4. Գրեթէ զուգորդութեան պահանջմամբ նախամեծար համարած եմ ամօթ-

խած քան զամօթդած. մինչ « բուն ձեւը ալօթընած ըլլալուն» առաջին ձեւն է որ ընդունելի է, կ'ըսէ պարոնը, իւր լծորդ ըլլալուն պատճառաւ: Հապճեպ մեկնուած թիւն մը: Աճառեան կը շարէ ամօթխած, ամօթդած, ամօթդեած ձեւերը, և կը հարցնէ. « ո՞րն է ուղիղ գրչութիւնը. թուում է վերջի երկուսը»: Բայց պէտք է զանազանել. լեւծ վերջը՝ լինել բային լեւծ անցելոյն երեւոյթն ունի, «յամօթ լինել» բացատրութենէն ազդուած. սակայն թէ լեւծ և թէ դեւծ վերջերն անսովոր են հին մատենագրաց քով, և առանց վկայութեան թողուած գիրենք նշանակող Հայկազենէն, որմէ առաւ և Աճառեան: Իսկ գործածականքն են խած ու դած արմատները, որոց առաջինը կ'ենթադրէ նախնական ամօթխած ձեւը, (ինչպէս պտղախայծ), և անտի ամօթխած, որ է ամօթէն շինող. և որ արդէն լաւագոյն մատենագրաց գործածած ձեւն ալ է. Ոսկերեքեանի, Իգնատիոսի և այլոց, ուստի և նախընտրելի քան ամօթդած, ինչպէս գրած եմ:

5. Պարոնը չի ընդունիր՝ որ արմատ բառերու մէջ բաղաձայն գրերու զուգորդութեան պահանջները զօրեն և բարդեղերու կամ ածանցներու մէջ. հետեւաբար հարկ չկայ գրել ջաղջախ փոխանակ ջախջախի: Ի զուր ուրեմն ի հաստատութիւն կանոնիդ՝ այդ բառին քով շարեր եմ բարբառ, կարկառ, մեղմեխ բարդերը, որոց շեղագրած տառերը փոփոխուած են ստիպողաբար, և որոնք չեն կարողացած լուսաւորել պարոնը: Բայց ուրիշ ի՞նչ կըրնայի ընել: Թող որ դասական մատենագիրք ալ — Ս. Գիրք, Եփրեմ եւն — արդէն ընդհանրապէս ջաղջախ կը գրեն, զոր պարոնը չափազանց դիւրութեամբ «ջուրը կը ձգէ»: Ես ինձ կը հակասեմ եղբւր՝ ընդունելով ջախխօսը՝ սովորական տղան հետ, և ջախջախն ոչ: Ինչո՞ւ ես կը հակասեմ. մի թէ ես ստեղծեցի բարբառը, կարկառը, մեղմեխը, և ես գրեցի ջաղջախը. կամ թէ ես հաստատեցի՝ թի առջեւ և ինչ զլացումն հայկական բառերու մէջ, և գործածութիւնն օտարաց մէջ միայն՝ բնագրին

հաւատարիմ մնալու համար: Փարտաշ շատ հապճեպով կարդացել է իմ ցուցադրած օրենքներն ու փաստերը:

6. Փոկելը, ծագած փիծ արմատէն, փցկել սրբագրած եմ, արմատը դնելով փցունը: «Սխալ է», կը շեշտէ պարոնը, օրինակ տալով Փիլոնի փծանք, փծուածութիւնը, և ոսկերեքեանի փծիկը: Բայց կը մոռնայ՝ թէ Փիլոն և ոսկերեքեանի ոսկերար չեն: Եւ երբ կը փոխադրուինք մեր լեզուին փառաց շրջանը, կը գտնենք հոն Ոսկերեքեանի թարգմանիչը, որ մինչ տեղ մը գրած է փծկեցան (Մեկ. Պօղ. Ա, 72), այլուր կը զգացնէ՝ թէ ծն զօրութեամբ թաւ փիին ց կը դառնայ. «փցնոյն շինողի» (871). «ամենայն ինչ եղծաւ փցկեցաւ» (150). «զբնաւ փցկիցէ» (922). որպէս զի համոզուինք՝ թէ ց հնչաբանական պահանջ մ'է հօդ, և թէ միակ ծն՝ զոր ունի՝ հետագայ գրչաց արդիւնք է. որով իմ տեսութեան մէջ սխալողն իմ սխալս բունդին քով որոնելի է:

7. «Շիտակը ցատկել է, կ'ըսէ, այլ ձեւերով գրելը սխալ է»: Այս ինձ վերագրուածն է. իսկ իմ գրածս հետեւեալն է. «ցարքել (հմտ. ժայրքել), ոչ ցարկել. զի թկ զատ կազմ ունի» (38): Ես հերքեր եմ ուրեմն ցարկել, ոչ թէ բոլոր «այլ ձեւեր»: Եւ հակառակ չեմ պարոնին ցատկելին ալ, որ տառերու զուգորդութեան օրինօք նոյնպէս ուղիղ է, ինչպէս ուղիղ է և նախնիք եւս գրեր են Տիպոն, Տիգրոն, Տիսիոն: Չի հաւանիր նա և իմ պորթքալին, ենթադրելով հօդ անծանօթ «բնածայն մը» կամ «պորտ» արմատը: Բայց մեք բոլոր շնչաւորաց պորտերը փակ գիտենք. ինչպէս կարելի է ուրեմն անոցմէ պորտկալ:

8. Ես գրեր եմ՝ թէ սխալ է «հանդիսութիւն» փոխանակ հանդէս, տօնախմբութիւն. զի ուրիշ գոյականացուցիչը կը զրուի ածականին վրայ. ոչ գոյականին: Պարոնը «չկըցայ գտնել, կ'ըսէ, ուրկէ՞ գտած է այդ կանոնը». և ինձ կը յիշեցնէ՝ «մանկութիւն, մոզութիւն, իշխանութիւն» և այլ գոյականակերտերը: Դի-

տել կու տամ նախ՝ որ իմ մատնանշած կանոնը կը ծագի «մեծ» մեծութիւն, չար՝ չարութիւն, բարի՝ բարութիւն» և այլ անհամար օրինակներէ: Երկրորդ՝ թէ ես սակաւարկած եմ «գոյականացուցիչ ուրիշին», այս ինքն անոր՝ որ ածականէն գոյական այլ շինէ, ինչպէս այդ օրինակաց մէջ, իսկ պարոնին կոչած օրինակաց ուրիշը գոյականացուցիչ չէ, այլ տարբեր պաշտօն ունի. թանձրացեալ գոյականը կը շրջէ վերացեալ գոյականի, այնպէս որ մանուկ և մանկութիւն, մոզ ու մոզութիւն, իշխան և իշխանութիւն նոյն բանը չեն նշանակեր՝ ինչպէս հանդէսն ու հանդիսութիւն, որոյ համար իսկ երկրորդն աւելորդ ու կազմով ալ սխալ է. որով և անգոյ նախնեաց բառարանին մէջ: Այո, հարկ է մեր լեզուին բոլոր ներութեանց տեղեակ լինել՝ ուղիղ դատաստան ընելու համար:

9. Ըսած եմ. «ոչ գրուելիք, այլ գրելի, որ աշխարհաբարի մէջ արդէն կրաւորակերպ է»: Ո՞վ է կրաւորակերպ. ոչ ամէն յի վերջացող, այլ գրելի, որոյ մասին միայն խօսած եմ: Արդ՝ թանաջի և ածելի ներգործական ալ լինելով գրաբարի մէջ, ինչպէս կը յիշեցնէ Փարտաշ, գրելին կը դադրի՝ լոկ կրաւորակերպ լինելէ աշխարհաբարի մէջ: Չեմ գիտեր՝ ի՞նչ կը հասկնայ պարոնը գրածներէս, կամ ի՞նչ կը պահանջէ:

10. Մեր ու երկրաբառին մէջ մէկ ձայն միայն նկատած ու պահանջած եմ. լատին Ա կամ զաղերէն ՕԱ: Բայց Փարտաշի «կը թուի՝ թէ Մեսրոպի օրով այդպէս պարզ ձայնաւոր չէր, այլ բարդ. ապա թէ ոչ՝ ինչո՞ւ նա մէկ ձայնը երկու գրով արտայայտէր, պարզապէս յունարէն ձեւին հետեւելով»: Այդ հարցման պատասխանն այս է՝ որ Մեսրոպ քան զպարոնը 15 դար յառաջ կ'ապրէր, ուր հայ լեզուն տարբեր պահանջներ ունէր, և սերտ կապ յոյն հնչաբանութեան հետ: Այդ ձայնը միւս յոյն ձայնաւորաց ու երկրաբառից հետ կար և մեր լեզուին մէջ, որով կըցեր ենք հնչել ու Մեսրոպ գրել՝ օտարներէն նոյն հնչմամբ առնուած բազմաթիւ բառեր, որոցմէ կոչած եմ օրինակներ (էջ

88): Հացեկացին այդ ձայնին համար, որ ցարդ պահուած է հայ բերանին մէջ, կամ ուրոյն գիր մը ստեղծելու էր, կամ ներկայացնելու ու ու Յունաց պէս: Արդ նա այրութեն մը գտաւ, որոյ տառերուն հիմն ու մեծագոյն մասն յունարէն ալփաբետն էր, և որուն յատուկ էր ՕԱ = Ա միակ ձայնն ալ ըստ համոզման մեծագոյն հելլենագիտաց: Եւ երբ նոյն զոյգ գրերն հայերենի մէջ ալ հանդիպէին իրարու, ու, ստիպուած նոյն ձայնը պիտի հանէին, ինչպէս կը հանէին բերանին մէջ. մանաւանդ որ Մաշթոց հայ ուղղագրութիւնը կերտեց «ըստ անսայթաքութեան սիղորայից հելլենացւոց» (Խոր. Գ, ծգ). ուստի անոնց ուղղագրութեան վրայ:

Մեր ու ու կազմուած ու կրկնաձայն կամ երկար երկրաբառներուն միջէն (ա, ե, ի, յ) ոչ մին հոլովմամբ կամ ածանցմամբ մէկ գրի կը վերածուի. այլ աւան փոփոխ կը մնայ. առդ՝ առդոյ. իսկ եւ և ի կը փոխուին. բեւր՝ բիւրու, թիս՝ թոսոյ. այս ինքն երկար երկրաբառը կարճի կը վերածուի, սակայն միշտ երկրաբառի: Ընդ հակառակն միաձայն գրերը միաձայնի կը փոխուին. մեզ՝ միզի, գիծ՝ գրծի. և առանց պէս ուն եւս կը դառնայ մէկ գրի. ջուր ջրոյ. ապացոյց՝ որ ուն ալ մի ձայն ունէր ինչպէս ե և ի, և այդ պատճառաւ մէկ գրի փոխուած է անոնց նման: Եւ ինչպէս ու կը փոխանակուի ռէն, նոյնպէս ինքն ալ կը փոխանակէ զոյ իրբեւ կարճ քան զայն. զոյգ՝ զոգի: Արդ եթէ ու բարդ էր, այս ինքն կրկնաձայն, ոյ ի պէս երկայն պիտի լինէր, և չպիտի կարենար անոր տեղն անցնիլ՝ կարճեցնելու համար ներս անցած վանկը, որ հայ առողանութեան պահանջն է, ինչպէս ընդարձակօրէն ցուցած եմ:

Պր. Փարտաշ հեռի այս հնչաբանական հաշիւներէն, կ'ապաւինի արտաքին անգործ փաստի մը: «Եթէ Մեսրոպ, կ'ըսէ, պարզ ընդօրինակող մը կամ կապկող մ'ըլլար, այդ պարագային յունարէն փա կամ քս միատառ նշաններուն ալ համապատասխան մէկ մէկ գիր կը շինէր երկրաբառայն ար-

շղթայներով կաշկանդուած այսպիսի մըտ-
քերու հետ, որ բազում հազարներով կը
հաշուին մեր քով, վիճել չէ կարելի. այլ
միայն անոնց անգիտակից «ապշուրին»
նայիլ գիտակից կարեկցութեամբ մը. հա-
մոզուած՝ թէ գիտութեան դարերն ամբո-
խէն և անոր կշտին գրողներէն անշատ
ու վեր բան մ'եղած է միշտ և ամենու-
րեք, և ամենուն չէ տրուած հասնիլ անոր,
նոյն իսկ երբ ոմանք իրենք զիրենք հա-
սած կարծեն միամտօրէն. մանաւանդ իւր
նախապաշարմանց գերի հայ ազգիս մէջ,
որուն համար զժբախտութիւն մ'է այդ
վիճակը, և զոր մեծագոյն զգացողներէն
մին եմ ես:

*
* *

Աշխատութիւնս տակաւին չէր տպա-
գրուած ամբողջովին, երբ Բաղմալիյի մէջ
լոյս տեսաւ անոր վերջին գրութիւն «Ներ-
դաշնակել աշխարհաբարը»: Թորգոմ
Պարթ. 1934ի նամակովն այսպէս կը գրէր
ինձ անոր մասին. «Ներդաշնակել աշխար-
հաբարը՝ ճշմարիտ հաճոյքով կարդացած
էի արդէն Բաղմալիյի նախընթաց թիւին
մէջ. վստահ եմ թէ նոյն հաճելի զգացումը
աւելի պիտի խորացնէ իմ մէջ զբրին ամ-
բողջական ընթերցումը»: Կաթողիկոսա-
կան փոխանորդ Յովհ. Արք. Նազիւան
փութացած էր խնդրել զիրքս, գրելով՝ թէ
«Անոր քաղուածը Բաղմալիյի մէջ շատ
տրամաբանական գտայ, և իմ ըմբռնու-
միս ալ համամիտ»: Եւ այդ երկու բարձր
եկեղեցականք ալ մտաւոր բարգաւաճման
կարօտ անձինք չէին, երբ իրենց հաճու-
թիւնը կը յայտնէին աշխարհաբարի բար-
ւոյման գաղափարիս:

Սիւն նոյն տարւոյն յուլիսին աշխա-
տութեանս ամբողջական ամփոփումը կա-
տարեց, և յարեց. «Գրքիս բովանդակու-
թեան այս մանրամասն ներկայացումէն
յետոյ այլ եւս կարծեմ աւելորդ է գո-
վեստներ հիւսել, ըսելով՝ թէ ո՛րքան ար-
ժէքաւոր է այն, իբրեւ առարկայական
ուսումնասիրութիւն՝ արդիւնք երկարատեւ

և խորամուխ հետազոտութեանց: Պարտք
կը համարինք սակայն ջերմօրէն յանձ-
նարարել զայն բոլոր անոնց՝ որ կը սի-
րեն մեր պերճ լեզուն և կը զբաղին անոր
ուսմամբ կամ ուսուցմամբ»:

Այս եղաւ վարմունքն աշխատութեանս
հանդէպ բոլոր անոնց՝ որոց զարգացումը
կասկածէ հեռի էր, և որոց թիւն յիշած-
ներէս շատ աւելի է: Բայց ես դատուելու
կարօտ դատաւորացս մէջ ունեցայ նա և
զպր. Ա. Զօպանեան՝ Անահտի մէջ (1936
սեպ. հոկ.), որ խտտացաւ յատկապէս
աշխարհաբարին նուիրած գլխոյս դէմ,
գրելով՝ թէ «զբարարէն անպատեհ, ան-
ճաշակ, ծայրայեղ փոխառութիւններով
աշխարհաբարը այլանդակելու տարօրինակ
առաջարկներ» ներկայացուցեր եմ: Այս-
չափ. զի իւր ոճն է՝ երեք բառով շինել
կամ կործանել. այնքան հզօր են իւր
բառերը: Եւ իմ ամբողջ գլխոյն մէջ ոչ
մի պիտանի բան չգտաւ ցուցնելու և կամ
առնելու: Անգիտակից ընթերցող մը պիտի
կարծէ՝ թէ այդ տողերը գրողն ունենալու
է պատեհ, ճաշակաւոր, գեղեցիկ և ան-
ստգիւտ հայերէն մը: Իսկ ես ոչ թէ պիտի
կարծեմ, այլ և պահանջեմ անձէ մը՝ որ
զիս դատելու ելած է: Առ այս կը սուգիմ
Անահտի նոյն պրակին և իւր ստորագրած
յօդուածոց մէջ. և ի՞նչ կ'ուզէր որ գտնեմ:

1. Նախ անոր մէջ աչքի կը զարնուի
հայերենի, թուրքերենի ու գաղերենի խառ-
նուրդ մը. անուշ ապուր: Հօն կայ, և
ստէպ, է՛ն թրքական մակբայը. «է՛ն ա-
ռաջ (թրք. en evel), է՛ն աղուոր (թրք.
en güzel)» և այլն. և աւելի՛ հեքիաթը,
յաճախ կրկնուած: Ունեցանք յարգուած
հայագետներ, որոնք այդ է՛ն միամտօրէն
կարծեցին մեր ամենեւեւ բառին յանգը. ա-
ռանց խորհելու՝ թէ շան պոչն երբ կտրես,
շունն առանց պոչին կ'ապրի, բայց պոչն
առանց շան չի ապրիր: Աղբքսանդրոս,
Գրիգորիոս, Տրդատէս անուններէն ունինք
Աղբքսանդր, Գրիգոր, Տրդատ. բայց Ոս,
իոս, Էս անուն չկայ. և սիկոս, ալիա-
տէս, դենարիոն օտար գոյականներէն
մնացին սիկո, ալիատ, դենար. իսկ ոս,

էս, իոն առանձինն՝ ոչ մէկ անգամ: Պոլսոյ
շուկայիկ հայերենի թրքապարգեւ է՛ն է
այդ, և ուրիշ ոչ ինչ, զոր անվրդով կը
կրկնեն ուրիշ քանի մը գրողներ ալ:

Զօպանեան «պատեհ» հայերենին և նոյն
պրակին մէջ իսկ կը վխտան և յաճախ
կը կրկնուին նա և հետեւեալ գաղերեննե-
րը. «թէզ, քրոնիկ, միստիքականօրէն, բե-
ժիմ, մարքսիզմ, ֆուլբուր, ֆուլբուրական,
մեթոտիկ, սիստեմ, ումանթիկ, ուման-
թիզմ, մեխտրամ, միսիոնար, սանաթո-
րիում, քոմիթէ, էնթրիկ, նօթ, պրիսմա-
կում, տոամ, օրկան, սթաթու քուօ, լիտ»:
Հօն կան նա և հայերէն բառեր կամ դար-
ձուածներ գաղիական իմաստներով՝ որ
չկան մեր բառագրոց մէջ. «առաջարկի
մը հետեւանք տրուած չըլլալը, (հյ. չկա-
տարուիլը, չգործադրուիլը). մեր առա-
ջարկը վիժեցնելու, (հյ. ձախողելու, ի
դերեւ հանելու). մէկէ աւելի անգամ, մէկէ
աւելի մեծ քերթողներ, (հյ. քանի մը).
կ'որդեգրէր, (հյ. կ'ընդունէր)» և այլն:
Դպրոցաց մէջ երբ աշակերտներ գաղերե-
նէ թարգմանելու ժամանակ այդ ստրկա-
կան հայացումներն ընեն, կը սրբազրենք
իրեւ սխալ: Եւ այդ բաղմալեզուեան խայ-
տարդէտ հայերէնն է՝ զոր կը հրամցնէ
Զօպանեան իւր ընթերցողաց՝ իբր «ճա-
շակաւոր» լեզու մը, և զիս ալ կը հրա-
ւիրէ ընդօրինակել զայն:

Ի՞նչ է այդ օտար բառերու կամ դար-
ձուածոց օգուտը մեր լեզուին համար: Մի՛
թէ չունինք մեք ատոնց հոմանշերը: Հա-
թէ չունինք հայ գրիչներ այսօր կը յեղյեղեն
րիւրաւոր հայ գրիչներ հայերէն բառերով, և
նոյն իմաստներն հայերէն բառերով, մա-
կը հասկցուին հասարակութենէն. մա-
նաւանդ աւելի լաւ՝ անոցմէ եւս որ գա-
ղերենի տեղեակ չեն: Ի՞նչպէս մեկնել ու-
րեմն այդ երեւոյթը Զօպանեան գրչին ներ-
քեւ: Ես չեմ ուզեր մեկնիլ լինել: Բայց չեմ
կրնար չհարցնել. իմ առաջարկած ձեւերս՝
որ կը զղխին հայ ազգին հին ու հարա-
զատ լեզուէն, — ուստի ծնաւ ու սնաւ
աշխարհաբարը, և որոյ կատարելութենէն
ու ճոխութենէն նա պէտք է ըմպէ միշտ, —
ձեւեր՝ զորս աշխարհաբարի քաջ գրիչ-

ներն ալ գործածած են արդէն, եթէ «կ'այ-
լանդակեն» աշխարհաբարը, ի՞նչ չեն ընել
ուրեմն պարոնին կիրարկած անհամար
օտար և շատերուն անհասկանալի բառերն
ու ձեւեր: Ընդհանուր համոզումն է լե-
զուագիտաց, հաստատուած փորձի վրայ,
թէ լեզուներու խառնուրդը մահ կը պա-
տրաստէ անոր՝ որ կ'ընդունի խառնուրդը:
Արդ՝ քննադատիս ոչ գեղեցկագիտական
յայտնի ճաշակին և ոչ ծանօթ ազգասի-
րութեան հետ կրնամ հաշտեցնել իւր վար-
մունքը՝ հայերենի դռները լայնօրէն բա-
նալու օտար լեզուաց առջեւ, և օգնելու
անոր կորստեան, և բռնեցը ցցած կանգ-
նելու մեր հարց հրաշալի բարբառին դէմ,
որ մեր հին քաղաքակրթութեան թարգ-
մանն ու պարծանքն է. և զոր պէտք է
պինդ բռնենք, եթէ չենք ուզեր հաւասա-
րիլ անցեալ ու պատմութիւն չունեցող
Քրդերուն:

2. Լեզուի մը ներդաշնակութիւնը կա-
խուած է առօգանութենէն, և զայն յօրի-
նող ձայնական տարերաց յարմարաւոր
դասաւորութենէն, որոց պատկերն է ուղ-
ղագրութիւնը: Բաղմալեզուեան հայերէնն
առօգանութեան քաղցրութիւնը պահելու
համար, մեծ արուեստով հիւսեր է իրա-
րու հետ բաղաձայն ու ձայնաւոր տառերը.
և դրեր նա և ձայնաւորաց սղուծներ ու
փոփոխութիւններ վերջին վանկի մէջ, երբ սա
հոլովմամբ կամ բարդմամբ ներս կ'անցնի.
և ատով կը համառօտէ և սահուն ու դիւ-
րահնչիւն կը դարձնէ բառերը: Զօպանեան
նախնեաց այդ դրութեան հանդէպ խառ-
նիխուռն ու հակասական վարմունք մ'ու-
նի, մերթ ընդունելով զայն ու մերթ մեր-
ժելով: Նախնեաց հետ կը համառօտէ ա-
ծանցներն ու կը գրէ «անդամակ'ցիլ, ա-
ջակ'ցութիւն, գործակ'ցութիւն». իսկ երբ
կարգը կու գայ արմատներու հոլովման,
կը գրէ՝ զոր օրինակ՝ «գործակիցի», փո-
խանակ «գործակ'ցի»՝ մեր հարց հետ, որոց
համար ներդաշնակութեան պահանջն հա-
ւասար էր ամէն ներս անցնող վերջին վանկի
մէջ, և նոյնպէս է նա և այժմ ամէն կիրթ
ականջի համար: Զօպանեան կը գրէ դար-

ձեռքը՝ «գ' ծել և նախագիծին»։ Գ' բեղ և օրա-
գիրին։ սիրտ՝ ս' րաքն ու սիրտով։ Գ' բեղն
ու գիրքերուն։ վիշտ՝ վիշտերուն», և ասոր
քով՝ «միտք՝ մ' տըրին, մ' տըրով, մ' տըրե-
րուն»։ Նոյնպէս «խ' մըրովին ու խոսմըով.
ժողով' րգական ու ժողով' ուրդին. գիտու-
թեան՝ գիտութեանէն, և վայրկեան՝ վայր-
կեանէն. ներշնչում՝ ներշնչման, վերա-
կանգնում՝ վերականգնման, և շեշտում՝
շեշտումի, վերլուծում՝ վերլուծումի. բե-
րում՝ բերմամբ, և նուիրում՝ նուիրումով,
ներկայացում՝ ներկայացումով. ամեն՝ ա-
մենէն, և հայերենի, հայերէնէն, գրագետի,
բանասերի. մշակութային և մշակոյթի».
Նոյնպէս «գոյնով, բոյրով, գայրոյթի, ե-
րեւոյթի» դանդաղ և անմարս ձեւերը։

Ինչո՞ւ այս հակասութիւնը։ Եթէ Զօ-
պանեան կը ճանաչէ և կը յարգէ ձայնա-
ւորաց փոփոխութեան ու հին հոլովմանց
գեղեցկութիւնը, ուրեմն կը վկայէ հակա-
ռակ ձեւերու տգեղութեան։ Ինչո՞ւ ապա
իրարու կը խառնէ գեղեցիկն ու տգեղը,
ազնիւն ու տափակը, և ինքն իրեն դէմ
կը դառնայ։ Եղան ժամանակ մ' ական-
ջակորոյս, անգիտակից և ինքնահաւան
Հայեր, որ պարծանք համարեցան նոր
հայերենի աղբատացումն ու մերկացումն
իւր բնիկ ներդաշնակութենէն ու զարդե-
րէն։ Զօպանեան մէկ ոտքով բռնուած է
անոնց ցանցին մէջ, և միւսը կ' երկարէ
դէպ ի հարազատ վայելչութիւնն հայերենի
լեզուին, որ կը հրապուրէ զինքը. և այս-
պէս յերկուս հետս կաղալու վիճակի մէջ
կը գտնուի։ Գիտակցութիւն և որոշ գոյն
պէտք է զարգացած և արի հոգիներուն։

3. Հայերենի բնիկ առողջանութիւնն
ունի իւր ուրիշ և աւելի նուրբ պահանջ-
ներն ալ։ Այսպէս մեր լեզուին տառերն
այնչափ դաշնակաւորութեամբ ու հաշուով
խառնուած են իրարու, որ բաղաձայն ու
ձայնաւոր գրերու կրկնութիւնը մերժուած
է, և բնաւ չի տեսնուիր հայ արմատա-
կան բառերու մէջ. վասն զի բաղաձայնից
կրկնութիւնը պիտի դանդաղեցնէր հնչու-
մը, և ձայնաւորացնէ իրարու քով պիտի
շարէր անյօդակապ և անախորժ ձայներ։

վերջինս աւելի տգեղ քան առաջինն՝ ա-
նոնց համար որ ականջ ունին։ Բաղաձայ-
նից կրկնութիւնը՝ զոր ունինք, արդիւնք
են ամփոփման՝ ձայնաւորի մը ջնջմամբ,
ինչպէս կտիտ՝ կտտել, փթիթ՝ փրքել և
այլն. և կամ ածանցման. անեման, խրատ-
տու։ Իսկ ձայնաւորացը՝ բոլորովին խոր-
շելի է, այնպէս որ Է գրով վերջացած փոք-
րաթիւ բառերու բացառականն անգամ կը
փոխէր հին հայերէնը, և երկաթագիրք կը
գրեն ի մարգարէ և այլն, ըստ կանոնին՝
զոր նկատեցինք կանխաւ (24). և միակ
զարտուղութիւնն է «դիւն» բային ստո-
րագասականը՝ դիւցեմ։ Ոչ միայն հայ,
այլ մարդկային ականջն ինքնին կը վկայէ
ձայնաւորաց կրկնութեան տգեղութեանը.
իսկ Գարտաշ, Զօպանեան և այլ անհա-
մարներ տգեղ կը համարին ճիշդ հակա-
ռակը, և կը գրեն Խորենացիին, Անիի,
հոգիի, եկեղեցիի, ամենասազնիւ և այլն,
զոհ երջանիկ իրենց ականջազրկութեամբ
ու մեր հարազատ ձեւերուն քրքացմամբ,
ինչպէս ապացուցած եմ փաստերով։ Եւ
ասոնք են հայերենի «ճաշակաւորութեան»
նախանձայուզերը։

4. Նոյնչափ անհանդուրժելի է ր տա-
ռին չարաչար գործածութիւնն ալ՝ յորում
կ' անկղիտանայ ներկայ աշխարհաբարը։
Հայ առողջանութիւնը չի ներեր ոչ միայն
ձայնաւորաց կրկնութեան, այլ և անոնց
խառնիխուռն կամ բոլորին հանդիպման
իրարու. այնպէս որ անոնց զուգադրու-
թիւնը փակած է որոշ ու չափաւոր սահ-
մաններու մէջ, որպէս զի ապահովէ ներ-
դաշնակութիւնը։ Իսկ բացառիկ դիրք մը
տուած է ր գրին, որ ռեզային լինելով,
և հազագին կէսը քթէն ելնելով, ոչ կրնայ
շեշտուիլ, և ոչ հանդիպիլ ուրիշ ձայնա-
ւորաց հետ։ Անոր համար իրեն տեղ նշա-
նակուած է բառին սկիզբը (գրուելով),
և մէջը կամ վերջն՝ երկու բաղաձայնից
միջեւ (առանց գրուելու), ուր շեշտ չկայ.
իսկ վերջին վանկի մէջ պատահելուն՝ կը
շեշտուի նախընթաց վանկը. օրինակ՝ ըն-
տիւր, գրգիւ, ունկըն։ Բայց երբեք չէ
գործածուեր բառից ծայրը։

Բառին մէջ իրարմէ խուսող ձայնաւորք՝
դուրսը դիպուածով կը հանդիպին իրարու,
եւր մին գտնուի նախորդ բառին ծայրը,
և միւսն՝ յաջորդին սկիզբը։ Այդ պարա-
գային, որով հետեւ ամէն բառ շեշտ մ' ունի
վերջին վանկի վրայ, շեշտը ձայնին դա-
դարիկ մը կու տայ նախորդ ձայնաւորին
վրայ, կը գտնէ զայն յաջորդէն և կը
դիւրացնէ անցքը միւսին. օրինակ՝ յուսա-
ւա Աստուած, մի՛ ընկենուր, բարի՛ իշխան
և այլն։ Իսկ երբ ր պատահի (աշխարհա-
բարի մէջ) բառին ծայրը, որով հետեւ ան-
շեշտելի է՝ ըսինք, և շեշտը կը գտնուի
նախադաս վանկին վրայ, ստիպուած կ' եր-
թայ կը խառնուի հետագայ ձայնաւորին
հետ, իբրեւ միացեալ լինէր անոր. և կու
տայ ըս, ըն, ըէ, ըր, ըի, ըո, ըռ, ըօ զու-
գաձայները, որ հայ բառերուն ներսը գոյու-
թիւն չունին. որոցմէ մեր հարց ականջը
սարսափեր է. և զորս Զօպանեան «անպա-
տեհ, անճաշակ, այլանդակ» բառերն իսկ
բաւական չեն որակելու։ Եւ ահա իմ դա-
տաւորներս անվրդով կը գործածեն այդ ձե-
ւերը, բնաւ չզգալով ր զիրը ճի փոխելու
կամ մըն համառօտելու պէտքը։ Գարտաշ
կը գրէ՝ «կանոնը արմատ բառերու. բա-
ցատրութիւնները էջեր կը գրուեն. կանոնը
ընդհանրացնելով. բա՛ռ մը իմացան. ա-
ռիթը ռննենալով»։ Եւ Զօպանեան՝ «քանի՛
մը աւիս. աշխատութիւնը արդէն. կորո՛ւստ
մը եղաւ. վաստակը ընդարձակ է. Արա-
մը գածին ստըր իր մանկութիւնն անցուցած է.
միայն ուտելու. հեղինակը օգտագործած է»։

Եթէ քան և աւելի դարերու հայու-
թիւնը կանգնէր այսօր, ի լուր այդ աղ-
ճատմանց՝ իւր ոսկեհնչին լեզուն օտա-
ւարութիւնը ազգի մը բերանն անցած պիտի
կարծէր։ Եւ ես չեմ վարանիր յայտա-
բարելու՝ թէ մեր արդի զրջաց հանճարեղ,
զարգացած և նոյն իսկ հայերենասէր զԵր-
ներէն կախուած են արդարեւ բարբարոս
ականջներ, հասած այդ վիճակին՝ առանց
իրենց մեղաց, և թրքերենի ազդեցութեամբ,
ինչպէս փաստած եմ գործիս մէջ, Գիտեմ.
հայ առողջանութեան իմ ուսուցած վար-
դապետութիւնը նոր յայտնութիւն մ' է,

և սովորականին վարժած մարդոց դժուա-
րահաղորդ. այնպէս որ Գարտաշ ու Զօպա-
նեան իմ աշխատութիւնս իրենց ձեռաց
մէջ բռնելէն վերջ ալ դեռ կը շարունա-
կեն իրենց ստրկական հետեւումն ամբո-
խային սխալագրութեան։ Ինչո՞ւ. որով հե-
տեւ ինչպէս առանց աչքերու կարելի չէ
զանազանել լուսոյ աստիճանները, նոյնպէս
և ոչ առանց ականջի՝ հնչմանց նրբութիւն-
ները։ Դեռ աւելին կայ։ Մեր գրիչները
գրելով՝ «մը ըսի, մը ունիմ», և ատոնց
քով ներդաշնակաբան փանաւնումը սղե-
լով անգիտակցօրէն կը մասնիկը, «կ' առ-
նեմ, կ' ըսեմ, կ' ուտեմ», կը դատապար-
տեն իրենք զիրենք, կը բողոքեն իրենք
իրենց դէմ, և դարձեալ չեն զգար։ Ո՛ր-
քան ցաւալի բան է ականջի պակասը։

Եթէ ոչ ականջով, գոնէ մտօք՝ — եթէ
սա նախապաշարուած չլինէր — պիտի կա-
րենային ըմբռնել արդարութիւնն իմ պա-
հանջմանց, որոնք հնչականին հետ տրա-
մարանական ալ են։ Պիտի կարեկցէի ի-
րենց դժբախտութեան, եթէ գէթ լռէին։
Բայց երբ կ' ելնեն կը շփոթեն լոյսը խա-
ւարին հետ, և կը բողոքեն լուսոյ դէմ,
ողջմտութիւնն ու մեր լեզուին սէրը կը
բռնադատեն զիս դատախազիցս հասկը-
ցնելու՝ թէ իրենց գէնքերը դարձնելու են
ոչ իմ, այլ իրենց դէմ, եթէ իսկապէս կը
սիրեն մեր այնչափ գեղեցիկ և այնչափ
այլակերպուած բարբարոս, և կ' ուզեն ա-
նոր փրկութիւնը։

Պր. Զօպանեան Անահտի Նոյն պրակին
մէջ ուրիշ նետ մ' ալ արձակեց իմ դէմ,
որ «վերջերս՝ գրքոյկի մը մէջ՝ հիմնուե-
լով խախուտ փաստերու վրայ, կարծեմ
եմ կարենալ Խորենացիին Ե դարու մարդ
ըլլալը հաստատել»։ Այսչափ։ Սակայն
բանասիրացս սովորութիւնն է, երբ երեք
բառով 78 իջնոց ուսումնասիրութիւն մը
հերքուած կարծուելու պարզմտութեան
առջեւ գտնուինք, այդ երեք բառերը չե-
ղած համարիլ, և անցնիլ երթալ, հեր-
քողը թողլով իւր դիւրագին յաղթանակին
քաղցր միսթարութեան մէջ։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ